

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկակ	12 ֆր.
վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար	սարեկակ
համար	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Անկերիկայի համար	սարեկակ
համար	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Մանուցման տոյր սուրբին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին սուրբին սեղաններու համար 20 0/0 զեղջ կրչայ:

Վառնայի համար ձեռ. ֆե 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱՆՈՒՆԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԷՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

իւսուկ եւ գրամ
դրկի խմբագրութեան
հասցիին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
ձեռ/հ

15 ՍԱՆԹԻՄ
Արսասահմանի համար
ձեռ/հ

20 ՍԱՆԹԻՄ
Գրութիւնք հս չեմ
տրուիւ

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիեննա քաղաքի Ժողովրդական Վարձատրական հայրենի կամարեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիծել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ
ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը վերջին օրերում գարձված էր գէպի Պարիզ. Ազատական նախարարութիւնը, եկեղեցիին պետութիւնից բաժանելու խնդիրը կարգադրելուց յետոյ, հակառակ պահպանողականների արքայական և կղերական պառլամենտների ձեռք առնելով Գրեյֆուսի խնդիրը, որոշել էր միանգամայն վերջ տալ այդ մղձաւանջ դարձած գատին և իրական արգարութիւնը, առանց ունենալ ման, իսկութեամբ մէջտեղ դնել Ուզատը տեսնվեց. Գրեյֆուսը անմեղ ճանաչվեց. շնորհիւ Շէրէրի, Զօլայի, Պիկարի արգարագոյ ճիշին արգարութիւնը յաղթանակեց, ու Գրեյֆուս երեւան եկաւ ոչ իբրև գրամի համար հայրենիքը գաւաճանող, այլ անմեղ մի զոհ կեղծարարների, գրամաշորթների, անբարոյացածների, որոնք հայրենասէր և մաքուր զինուորականների, գատաւորների գիմակներով վարդաբլամ իրենց ստորնութիւնները և վատութիւնները պարտկելու համար, օտարագաւան, բայց ուշիմ, ընդունակ և իր պաշտօնի ու կոչումի մէջ երբէք չը թերացած սպայ Գրեյֆուսին քառութեան նոխալ

էին ընտրել: Գրեյֆուսի արգարացուիք ոչ միայն արգարութեան յաղթանակն է, այլև ժամանակակից Թրանսայի ազատական և մաքուր զաւակների, որոնք արգարութիւնը ամեն ինչից գերազանցին և այդպիսով ֆրանսական հանրապետութեան գլխին աւելցրին մի անթառամ պսակ եւս: Գրեյֆուս անմեղ է. որոշեց Բ. գատարանը և այդ որոշումը կառավարութեան ծախքով պետք է յայտարարվի բազմաթիւ թերթերում, պետք է իբրև յայտարարութիւն փակցվի Ռէնի և Պարիզի պատերի վրա, ուր օրվու անգամ շնորհիւ անխիղճ կեղծարարների Գրեյֆուս գատարարված էր իբրև գաւաճան. կեղծարարներ են էստէրհազի, Հանրի և սուտ վկաներ մէնէրալներ Մերսիէ և Գոնս: Արգար լինելուց յետոյ Գրեյֆուս պետք է վարձատրվի, որոշում է նախարարութիւնը. նա պետք է վերգրենու իր զինուորական զգեստը աւելի բարձր պաշտօնով, որին հասած պիտի լինէր մինչև հիմա, եթէ այդ փորձանքը չգար. իսկ վեհաձեռն գնդապետ Պիքար ժեներալութեան աստիճան պետք է ստանայ: Շատ լու մտածում են ազատական երեսփոխանները. պետք է վարձատրել և արի, հոչակաւոր «մեղադրում եմ» գրող քաղաքացի տաղանդաւոր և գրագէտ, այժմ հանգուցեալ, Զօլային և Շերէրին, նոյնպէս հանգուցեալ սենատորին, նրանց ուկորները տեղափոխելով Պանթօն, Թրանսայի մեծ զաւակների հանգստարանը: Որովհետեւ այդ երկու անձերն էին որ եռանդով և ամեն վտանգ յանձն առնելով հող պատրաստեցին Գրեյֆուսի գատար առաջին վերաքննութեան համար: Ապա պետք է պատժել ստախոս, ոճրագործ ժեներալներին և նրանց բոլոր գործիքներին ու ստորագրեալներին, որ նախ քան

րանսական արգարացուութիւնը գրին սճրագործ սխալի մէջ՝ երկրորդ մի անմեղ մարդի. իր կնոջով. զաւակներով միասին բնթարկեցին անտանելի բարոյական տանջանքների, ու քիչ մնաց հանրապետութիւնը ենթարկէին վտանգաւոր փոթորիկների և ալեկոծման: Պահանջը արգարացի է. ֆրանսական արգարացուութիւնը իր մեծութեան, բարձրութեան իրական աստիճանին կը հասնի, երբ կը պատժվեն Մերսիէ և Գոնս ժեներալները—երբեք ֆրանսական զօրքի կառավարիչ, բայց կեղծարար, անխիղճ, անմաքուր այդ զօրավարները: Փառք և պատիւ Զօլային և բոլոր իր աջակիցներին, որոնք կարողացան իրենց հայրենիքը ազատել գատական մի սարսափելի ոճրագործութիւնից. փառք և պատիւ ֆրանսայի ժողովրդին որ Արգարութիւնը յաղթանակի տալու համար ոտքի տակ տեց ամեն մի ոսկեպատ սուտ հեղինակութիւն, որ զինուորական տարազին պապիկնած, ամբոխի թոյլ կողմերը շոյելով, իր մեծութիւնը հիմնել էր ցիխի վրա: ՎԱՐԴՈ

ՄՕՏԻԿ ԱՆՅԵԱԼԻՑ

(Արտատպած «Մուրճ»-ին)
(Շար. նախորդ թիւէն)

Այդքան թեթեւամիտ վերաբերմունք զէպի մի ամբողջ ժողովրդի գոյութիւն բացատրելի է միայն մեր մտաւոր զարգացման այն գրութեամբ, երբ լուրջ գրական մտածողութիւնը մեր իրական պայմանների հետ բազմակողմանի և հիմնաւոր ծանօթութիւնը աւելորդ էր համարուում և հասարակական-քաղաքական հարցերում բանաստեղծի, վիպասանի կամ ֆանտաստի ցուցմունքներով էինք զեկավարվում և միմիտ անալոգիաներով ծրագիր, տակտիկա որոշում... Ժընեից Սասունը և Տարօնը չեն երեւում, ի հարկէ, ինչպէս և Պետերբուրգից Մանչուրիան, սակայն ինչու սին յոյսերով ու ցնորք-

ներով զոհել առիւծ հերոսներ. գետնի հետ հաւասարեցնել ամբողջ գաւառներ, հազարաւոր զոհերի արեւ մարեցնել... Կոնդրատենկոսներ, Սերբներ նրա համար չէ ծնունդ ժողովուրդը որ հեռու մտած իշխել սիրող բիւրօկրատները կամ գեմազոգները իրանց անհեռատեյ, անփոյթ, կարճամիտ և թեթեւօրիկ տակտիկով մեծ ծաւալով էքսպերիմենտներ անեն... Մակերեւոյթային անալոգիաներ հեշտ է անել, իսկ գրութիւնների հիմնական տարբերութիւնները ըմբռնելու համար հարկաւոր է գիտական պատրաստութիւն, զրական ուսումնասիրութիւն, Ահա ուր էր մեր մտաւորականի թոյլ կողմը, և անա սխալ անալոգիաներով, յեղափոխափոխական բոմանտիզմի և պոռոտախօսութեան ազդեցութեամբ յափշտակուած մեր կեանքի մէջ սկսուած է տարածել մի նոր ազգային սնահաւատութիւն. իբր թէ թիւրքալուծ հայերը կարող են զինուած ապստամբութեամբ ստանալ այն, ինչ բոլորովին տարբեր հանգամանգում ստացան յոյները, բուլղարները: Այդ նոր սնտիահաւատութիւնը հիպոնոզեց ոչ միայն իսկ ներտասարգութիւնը, այլ և իրանց ազգի ազհամարող մտաւորականներին, որ որոնք բաւական բարիկ էին հասարակական գիտութիւնների նորադոյն հոսանքների մէջ, ինչպէս և մեր իրականութիւնը ճանաչելու գործում: 1876 թուականի անցքերը չլկացրին մեզ և մենք թողինք վաթսուական թուականներից սկսած վերածնութեան դանդաղ, սակայն հաստատ ճանապարհը, որ հայի անտեսական բարբաւաճման հետ առաջ էր բերելու և նրա մտաւոր յաղթանակը խաղաղ ճանապարհով և զրկեցինք արկածալի, արիւնոտ անյայտը, հրմայլած նրա շրջանող, խաբուսիկ մօտիկութիւնից: Շտապեցինք սշուտով, այժմ կամ երբէք» անա փութկոտ բմբոսների նշանարանը: Ինչպէս ամեն մի նոր վարդապետութիւն, այնպէս էլ այդ յեղափոխական բոմանտիզմը ունեցաւ իր մարգարէները. սոքաքեալները, իր կոյր հատապարտների հետ և իր անսխալական քուրմերը, իր ինկվիզիտորները և վերջապէս իր բիւրօկրատիան՝ ընկառակը արգարացունում է միջոցները, նշանաբանով, իր մարդասպան էարկտաններով, կուսակցամով կախիներով ու սպանութիւններով... Ի դէպ, աւելորդ չը լինի մի ան-

եակ ըլլալ այս բանին՝ ինչ պիտի զգան արդեօք շատ բնական է որ անոնք՝ գէշ պիտի զգան .

Այս անգամ համառօտ տեղեկութիւն մը տալով Ամերիկայի հայ գաղութներուն փորձաքմը եղող պատուելի Յովհաննէս Սանդիկեան ըստաճի մասին . յայտնողով պիտի ջանամ քանի մը խօսք եւս ըսել .

ՆԵՇՈՒՆԷ Բարկէն Սարհատեան (Ամերիկա)

Վ Ե Ց Ա Մ Ի Ս Պ Ա Ր Ի Զ Ո Ւ Մ

(Տպաւորութիւններ)

Ասում են թէ Պարիզը եւրոպական քաղաքակրթութեան կեդրոնն է . եւ այդ կարծիքը զուր չէ ստեղծվել . Ոչ մի մայրաքաղաքում այնքան օտար ցեղերին պատկանող եւ այն էլ կրթութիւն ուսում տանողը համար եկած մարդիկ չէք տեսնի որ չափ Պարիզում . Եւրոպական , Ասիական , Ափրիկեան , Ամերիկեան եւ Աւստրալիոյ բոլոր կուլտուրական ցեղերը իրենց ուսանողները ունեն Պարիզում . բացի ուսանողներից , գայիս են եւ շատ հատեն մարդիկ կատարելագործվելու եւ կամ հին ու նոր բաներ տեսնելու համար . Պարիզում մարդ կարող է շատ բան սովորել ոչ միայն քաղաքային ուսումնական կարգով , այլ քաղաքի մոզներում . գրաւարաններում , բուսաբանական հեկտորանաբանական պարտէզում . մանաւազ որ ամեն տեղ մուտքը ձրի է : Մուզէներէից՝ Լուվրը , Տրոյատերոն , Լիւքսեմպուրկը , Կլիւնի , Ինվալիտները պատառ այցելուին կը ներկայացնեն մարդկային քաղաքակրթութեան բոլոր աստիճաններ բոլոր ճիւղերով միասին , ամենահին գարեբից սկսած մինչեւ մեր օրերը : Այդ բոլորը տեսնելուց յետոյ , մարդ գործանում է որ սեր ուսանողներից շատերը տարիներով Պարիզում ապրելուց յետոյ , հայրենիք են վերադառնում , ընդհանուր զարգացման տեսակէտից , նոյն դադարիկ զլիով , ինչ դադարկութեամբ որ գնացել էին ուսանելու , միայն այն տարբերութեամբ որ կարողացել են մի քիչ

Ֆրանսերէն սովորել եւ մի մասնագիտական գիւլում փրցնել , որով Ֆրանսայում գործ տեսնել էլ չէին կարող :

Դրա պատճառը այն է որ մեր սանտուրութիւնը երբէք տրամադրութիւն չունի ընդհանրապէս զարգացած մարդ լինել . նա իր ժամանակի մի փոքր մասը նւիրում է իր մասնագիտութեան , իսկ մեծ մասը զբաղւած Պարիզում աւարտած բժիշկներ , իրաւաբաններ , եւն . բայց չունենք զարգացած մարդիկ . . . Եւ այդ անզարգացումն է որ նրանց ստիպում է չը հետաքրքրվել ընկերային ոչ մի ճառով , այլ մտածել միայն եւ միայն իր ապագան շտկելու հոգով . . . Որքա ի հարկէ յարգելի բացառութիւնների մասին չէ եւ այդ բացառութիւնները այնքան քիչ են , որ յիշելն իսկ աւելորդ կը լինէր :

Պարիզում կեանքը համեմատաբար այնքան սուղ չէ . սակայն ուսանողի համար նա կաշող է սուղ համարվել . որովհետեւ իսկապէս Պարիզում ապրած լինելու համար , այսինքն որպէս զի հնար լինի քաղաքակրթութեան իրական բարիքները վայելել պէտքական գրքեր ունենալ , լաւ թատրոններ այցելել , բոլոր միզները լրջօրէն տեսնել , այցելել այնպիսի կաֆէներ ուր Պարիզի փոքր խառն բարձր , ինտելիգենց մասն է յաճախում , պէտք է ամսական 250 — 400 ֆրանկ տրամադրելի ունենալ եւ Ֆրանսայի ուսանողութեան խոշոր մեծամասնութիւնը զրանց պակասով չէ ապրում , Հակառակ պարագային բացի նրանից որ չէ կարող Պարիզի կեանքից մի առանձին օգուտ ստանալ , այլեւ կարող է իր առողջութիւնը կորցնել վատ սնունդի , բնակարանի եւ զգեստների պատճառով :

Մեր ուսանողութեան մեծամասնութիւնը զօրախտաբար աղքատներին է կազմված . որը Պարիզից շատ քիչ բան է տանում հայրենիք . իսկ հարուստ մասն էլ իր ունեցած գործը ծախսում է այնպիսի տեղերում որ ոչ միայն նրա ուղեւորին պաշար չեն հայթայթում , այլեւ ընդհանրապէս են ու օժտում կապկային շարժումներով , որոնք վերջը ամենազորաւոր

զէնքն են դառնում մեր միամիտ խեղճ ժողովրդի աչքին թող փշելու եւ հարստանարելու համար :

Ուսանողութիւնը , մանաւանդ Տանկահայ , չէ հետաքրքրում ոչ մի ընկերական խնդրով , որոնք ամբողջ մտաւորական եւրոպայի առջեւ դրված են տանջող հարցականներով . եւ դրա համար միտ բացակայում են զանազան կոնֆէրանսներից , Ֆրանսացի սանտուր այդպէս չէ . նա ամեն տեղ հասնում է . թէ զբարձրութեան եւ թէ մի բան սովորելու , հասկանալու վայրերը . Ռուս , լեհ ուսանողներն էլ այնպիսի են սովորելու . Օրինակ ռուս ուսանողը աւելի լաւ կը համարէ մի փոքրատ . կամ շապիկ պակաս ունենալ , քան թէ զրկվել այսինչ լաւ ներկայացումից :

Իմ կարծիքով Պարիզը արեւելցի ուսանողութեան տեղ չէ . կիսավայրենի կամ կէս քաղաքակրթ արեւելցիք Պարիզում են թարկվում են արտաքին փայլին — շատ են տարվում կանանց , որովհետեւ հայրենիքում կիրք իրենց համար անմատչելի է . ու մինչեւ խելքի գալը արդէն փչացած են :

Հայը Պարիզ պէտք է գնա արդէն իրբեւ հասունացած , կեանքի , որոշ շափով , բովից անցած , որպէս զի չը տարվի Ֆրանսական բարբերի թեթեւ կողմերին . . . որոնք Ֆրանսացուն չեն քիակնացնում , բայց մեզ կամ շուտով ձեռագրում են , կամ բոլորովին շարլատանների վերածում :

ՎԱՐՂՈ

ԱՂՔԱՍՏԻ ԽՆԱՍՐ ԸՆԻՆՈՒՄՅՈՒՄ 29 Յունիս 1906 Թիւ 19

Պատուարժան խմբագրութիւն «Նարժում» պատուական թերթի Վառնա թուականէս քանի մը օր առաջ տեղւոյս ուստիականութեան կողմէ որպէս դատարկապարտ խաբբայ արտաքուսեցաւ Գրիգոր Մանուկեան անունով ներկայացած հայ երիտասարդ մը : Այս անձը հազիւ 20—22 տա-

րեկտն բարձրահասակ սեւ ըսուելու շափ թուխ , կլոր գէմք , լայն բարձր ճակատով է :

Տեղւոյս ամեն շրջանակներու մէջ մտաւ դիմեց ամեն տեղ նըպաստ խնդրելու իր կարօտ վիճակը յայտարարելով :

Յշխատութիւն առաջարկուցաւ շընդունեց , զբաղում գըտնուեցաւ շի գնաց , իսկ վերջի վերջոյ ուստիականութեան ուշագրութիւնը գրաւեց , խուզարկութեան արդիւնքը ելաւ 300 ֆրոգրամ մէկ սանթիմ շունիմ ըսելով յայտնու է ինքզինքը ամէն բանի կարօտ ցոյց տուող պր . խաչագողի վրայէն , երկոտանեակներով գուլպաներ թաշկիտակներ ունէր . քանակութիւն մը գոր անհատի մը գործածելու շափէն շատ աւելի էր :

Մէկ խօսքով կատարեալ խաչագող մը մուրացկանութիւնը եւ լալկանութիւնը իրեն գործիք ընելով ամենուրեք կը շահագործէ բարեգութ ազգայիններս եւ երիտասարդութիւնը :

Միայն վերջի պահուն քանի մը ազնիւ երիտասարդներու միջոցաւ ինչպաստ իրեն , պր . խաչագողի հաւաքուած 42 լէֆ 25 սանթիմ գումար մը յիշեալին ցոյնը գուրս տալէն ետքը նուիրուեցաւ Աղքատախնամին :

Ձայս կը փութամք պատուարժան խմբագրութեան գեղկուցանել որպէսզի յարմար դատած միջոցաւ հաճի զգուշացնել մեր բոլոր բարեսիրտ ու ազնիւ ազգայինները չը խաբուելու համար այս տեսակ խաչագողներէ :

Ընդունեցէք մեր սիրոյ յարգանաց հաւաստիքը :

Ի դիմաց Աղքատախնամ վարչութեան

Ատենադպիր Ատենապետ Խ . Մազմանեան Վ . Ս . Փափագեան (կնիք)

ուսուց եւ յետեւից մեզ ուղեկցում էին Երեկոյան մենք հասանք սուրբ Բարթողիմոսի հինաւորաց վանքը որ հետեւից ամրոցի նմանում էր իր հաստ պարիսպներով ու աշտարակներով . միայն սիրուն գմբեթից եւ բարձր զանգակատնից յայտնում էր որ դա մի վանք էր բլուրի մի գլխին կառուցուած . Այնտեղ էր կայծակը (Յովն . վրպ Բագունի) որ սիրալիր ընդունեց եւ հիւրընկալեց մեզ :

Մեծ սովի տարին լինելով 4 . Պոլսոյ Սովելոց Յանձնաժողովի կողմանէ Սր . Բարթողիմոսի վանքում Աղքակիր որը և անտէրունչ երեխայից համար մի պատասպարան կառուցուած էր վանքի բակի մի անկիւնում ուր 15—20 մանչերի հետ պարապում էր կովկասից եկած մի երիտասարդ ուսուցիչ , պ . Ջաքէ , որ յետոյ դարձաւ Բագարատ վարդապետ թէվէլքեիեան : Նա մի ժամանակ Սայմաի Դէբըզ վանքի վանահայր եղաւ եւ կովկասում մեր հոգեւորականների ամենաշնորհալիներից եւ իրենց բարձր կոչումն ու կարեւոր պաշտօնը ըմբռնողներից

ու ըստ այնմ վարուողներից մինը հանդիսացաւ իր եռանդուն եւ ազգօգուտ գնահատելի գործունէութեամբ : Այն ժամանակից Հայոց Հայրիկը շատ էր սիրում այդ համեստ անձնանէր գործիչին , այդ մի տիպար էր աշխատասիրութեան եւ անձնազոհ պարտաճանաչութեան : Նա վաստակաւորութեամբ , կարմրաշապիկ վարժապետ անունով , սամա ձմեռ , տանը թէ փողոցում , ամեն տեղ և ամեն ժամանակ իր հազին ունեցած կարմիր շիլայ բլուրին պատճառով , Կարծես մի գարբբալդեան լինէր նա : Այնտեղ էր նա . Այվադեան Սահակ վարդապետը իր փոխանորդ վանահօր , որ իր պաշտօնական հանգամանքին պատճառով միշտ Բալկալայում պէտք էր բնակուի :

Հինաւորաց այս հոյակապ վանքի մենք ամեն կողմը ման եկանք , բայց խիստ աղքատիկ և անլուք գրութեան մէջ գտանք ամեն բան վասնդի անցեալ աղէտալի մեծ պատերազմի միջոցին Համիդի ջուրդ բաշխողութեանը ամբողջովին կողոպտել ու թա-

լանել էին նրան : Կայծակը պատմեց մեզ ահաւոր պատմութիւնը . եղիազար վարդապետի վանահայրութեան օրով էր իրը մի օր յանկարծ 12 թռուռներ (բրգաց տղուական դասակարգը այդպէս է կոչուում) զանազան ցիւղերից հետեւակ ու ձիաւոր զորքով պարզում են վանքը . ազատութեան ոչ մի յոյս չլինելու վարդապետը անձնատուր է լինում պայմանաւ որ նրանք խնայէին այնտեղ հասարակած հայ ժողովրդին որ վանքի անմիջապէս կից եղող համանուն գիւղից այնտեղ ապաստանել էր : Մեծ ցեղապետ և արշաւանքի հրամանատար Օմէր Աղան համաձայնուեց , եւ վանքի խոշոր գոնեքը կռնտիկ վրայ բացուեցին նրանց առաջ . Գրդեբը սովալլուկ դալբերի նման վրայ ներս խուժեցին եւ սկսեց անգութ թալանը նրանք կատարելու սըրբեցին կողոպտեցին այդ ճոխ և հարուստ հնօրեայ հաստատութիւնը որ միշտ խնայուած էր անցեալ բոլոր թալան-թուլանի միջոցներին . քանզի իբր մի սուրբ , առաքելահաստատ օ-

ջաղ . վանքը մեծ համբաւ էր վայելում քրդերի մօտ՝ պատկառանք եւ երկիւղ տղեկով նրանց : Բայց այն երանելի ժամանակներից իվեր ամեն բան փոփոխուել էր . և էվոլիցիայի օրէնքի հիման վրայ այդ լեռնաբնակ քրդերն ալ լուսաւորուել եւ ազատուել էին իրանց հինաւորաց նախապաշարմունքներից , որով նրանք հայոց սրբութեանցը ձեռք չէին տալիս : Աննկարագրելի էր հայոց ահն ու սարսափը , բայց բարեբախտաբար կոտորած չեղաւ այն ատեն , անշուշտ . . . Մուլթան Համիդի հրամանով , որպէս նոյն տարին օսմանեան կանոնաւոր զօրքը , երբ զիջելով հրդեհեց ու լիովին թալանեց Վանի մեծ շուկան իր 1500 ապրանքով լիք խանութներով , մինչդեռ նրանց տէրերը քաղաքից կէս ժամ հեռու Ալգեստանի թաղերում անդորր ու խաղաղ քնում էին . . . շնորհիւ Վեհ . Սուլթանին եւ ոչ մի ջարդ չպատահեց . . . ըստ սուլթանի խիստ հրամանների . . .

(Շարունակելի)

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ.

ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԷՁ»

Յուլիսին այս անունով մի բըրոշիւր պէտք է յանձնվի տպագրութեան :

Բրոշիւրի նպատակն է, առանց խժրժանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ գնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց : Ինչպէս է որ բրոշիւրի մէջ փաստող գոկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն :

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր :

Դիմել «Տարբու մի Խմբագրութեան»

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պուլէն «Վեչերնա Բոշթա» թերթին կը հաղորդեն թէ՛ երեք հայ խմբագիրները, որագրող մը և փաստարան մը, որոնք ձերբակալուան էին Զիրաճիի դատին պատճառով, իշխանութեանց կողմէն անմեղ ճանչըցուած էին եղած քննութիւններով հետեւանքով ու պէտք է ազատ արձակուէին, սակայն Նէճիպ Մէլհամէի գործակալ Սէլիմ Ռաադ Էֆէնտիի մէկ տեղեկագրին համաձայն նորէն բանտին մէջ թողուած են : Պէտք է աւելցնել որ պարսկահայաստանի Զերաճի որ ձերբակալութենէն քանի մը վայրկեան վերջը ազատ արձակուած է անգլիական և պարսից դեսպաններուն պահանջով, զատապարտուած է 15 տարուան տաժանակիր աշխատանքի :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօտ չորս հազար գիւղական և ստորին կարգի դպրոցներու ուսուցիչներ ժողովի հաւաքուերեն Սօֆիայի մէջ : Ուսուցիչներուն նպատակն է միջոցներ խորհրդապարտներուն ինքնավարութեան և ուսուցիչներուն նիւթական վիճակը բարելաւելու համար :

Պուլկար ամբողջ մամուլը համակրութեամբ կը վերաբերի այդ ժողովին միայն քիչ մը գէշ աշքով կը նայի որ անոնք աւելի ընկերավարական կուսակցութեան կը յակին և գործաւոր դասակարգին վրայ յենած են իրենց նպատակները իրագործելու համար :

— Վառնայի յոյն եպիսկոպոսի գալուստն և մերժուելուն խնդիրը աւելի սուր կերպարանք ընդունեց Վառնայի մէջ : Երէկ պուլկար ժողովրդին մէկ մասը գրգռուած գրաւեց յունաց նիքոլա

եկեղեցին և վերածեց պուլկարականի անունը Բիրիլ և Մէթօտի փոխելով : Յօյն հասարակութիւնը մեծ վախի մէջ էր : Անմիջապէս յոյն մասամբ և հրէա խանութներ գոցուեցան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻԿԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Յուլիս 1 ին Պուլէն կը հաղորդեն : Թուրք պարսկական բախումը կը բարդուի և լրջօրէն կը անհանգստացնէ գիւսացիտական շրջանակները : Մինչեւ հիմակ յոյս կար որ Անգլիա և Իտալիա պիտի միջամտեն, բայց քանի որ պետութեանց դեսպանները առանձին տառնձին կը գործեն, Բարձրագոյն Դուռը այդ երեւոյթը անմիութեան նշան ընդունելով, չի վիշտանիր :

Գերմանիա կարծելով որ ժամանակը հիմա հասած է կաշխատի այժմ համաձայնիլ Թուրքիոյ և Պարսկաստանի հետ կաշխատի պարսից ծոցի քով և պարսկական հողի վրայ քարածուխի միջերանոց հաստատել :

— Թէհրանէն յուլիս 1 ին կը հեռագրեն : Այստեղ մեծ յուզումներ առաջացան աստուածաբանութեան ուսուցչապետի մը ձերբակալութեան պատճառով, զոր ուսանողները բռնութեամբ ազատեցին : Ընդհարումներ տեղի ունեցան, ուսանող մը սպանուեցաւ և մէկ քանին ալ վիրաւորուեցան : քաղաքի մէջ պահակախմբեր կը պատին : Խանութները գոցուած են : Ինչպէս թիւնը, որ կը զեկավարուի հոգեւորականներէն, բարենորոգումներ կուզէ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն յուլիս 1 ին կը հեռագրեն հետեւեալը : Պետական խորհուրդը 74 ձայնով ընդգէճ 47 ի մերժեց տուժալի քուէարկած 15 միլիոն վարկին որոշումը, որ կառավարութիւնը պիտի գործածէր պէտք ունեցող գիւղացիներուն օգնելու համար : Մերժեց նաև կառավարութեան առաջարկած փոփոխութիւնները որոնց շնորհիւ կուզէին 15 միլիոնը 50 ի բարձրացնել :

Այնպէս որ պետական խորհուրդը եւս հակառակ է կառավարութեան :

— Մոսկուայի զեմստոյին նախկին նախագահ Շիրօֆ Բեթերօֆ կանչուելով առաջարկութիւն ստացեր է նոր դահլիճ կազմակերպել : Սակայն Շիրով մերժած է յայտարարելով թէ յարատեղ նախարարութիւն մը կարելի է միայն մեծամասնութիւն ներկայացնող երեսփոխան :

ներուն մէջէն կազմակերպել :

— Անգլիական նաւատորմի ռուսական նաւահանգիստները այցելելու խնդիրը յետաձգուած է ռուս կառավարութեան միջամտութեամբ :

— Վարչապետի սպիտակ պահեստին մէջ հրդեհ ծագած է : 6 զինուած մարտիչ շնորհիւ : Հըրձիգները կրցած են փախչիլ :

— Ստէսայի նաւահանգստի գործաւորները ընդհանուր գործաւժող յայտարարեցին : Միայն քարածուխ փոխադրողները կաշխատին :

Սեւծովեան նաւատորմի հրամանատար Չուխին սպանուեցաւ : ձերբակալուած է իր ծառան :

— Յուլիս 2 ին Բեթերսպուրկէն Պէրլին կը հեռագրեն—կովկասի մէջ քաղաքացիական պատերազմը սաստկացած է : Շատ անգիր զօրքերը յաղթուած են : գիւղացիներէն :

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքէն կը հաղորդեն հետեւեալը — Ռուսներու թաղարտաքսուած յոյներէն եկած են և 150 ընտանիքներ : որ կառավարութենէն երկրագործութեամբ պարապելու համար հող կուզեն թեալիոյ մէջ : կառավարութիւնը կը յետաձգէ ազատ ներէն երաշխաւորութիւն ուղելով որ պիտի կարենան երկրագործական գործիքներ և պէտք եղած անասունները գնել :

Մինչեւ օրս այնպէս հասկցուած է որ հարուստ գաղթականներէն և ոչ մին Յունաստան պիտի մնայ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկարիչ Ֆէթիմաճեանի Անիի աւերակների գունաւոր և գեղեցիկ աւրօմները և փոստ քարտերը մեծ քանակութեամբ ծախվում են Վիէնայում պ. Գ. Ամասունու մօտ :

Ալբոմի գինը, փոստի ծախքով, 3 քրօն է, իսկ փոստ կարտերի հատը փոստի ծախքով 20 հելլէր :

Պէտք է դիմել հետեւեալ հասցէին : Գ. Ա. մատուցի Սդ. Բուվըր կաս թիւ 3 գիր 32. Վիէնա

Մ Ո Ւ Ը

Ա մ ս ա գ ի ր

Գրական, Հասարակական և Բաղադրական Բ ա ժ ն ե գ ի ն ք Արտասահմանի համար տարեկան 12 րուպի վեցամսեայ 7 րուպի Հասցէ՝ Բ է տ ա ք ս ի օ ն տ ր լ ա ր ը վ ի լ Մ Ո Ւ Ը (Կովկաս) Թիֆլիզ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՃԱՐԱՆ 1024 (Չուրցերիա) 5-րդ. տարեշրջան

Լօղանի հայ կրթարանը սահմանափակ թւով աշակերտներ կընդունի : Աշակերտներու ընդունելութիւնը սեղի կունենայ մինչեւ Սեպտեմբերի սկիզբը, այն ատեն կըսկսին դասախօսութիւնները :

Աշակերտներու ընդհանուր կըրթութիւնը կը կատարուի տեղական պետական ուսումնարաններուն մէջ, եւ ազգայինը, ինչպէս եւ թոյլ առարկաներու պատրաստութիւնը՝ կրթարանիս մէջ : Ընտանեկան կեանք :

Կրթարան ունի ֆրանսերէնի եւ գերմաներէնի համար եւրոպացի ներքին օգնականներ :

Ընդունելութեան տարիք՝ 8-15 : Հինգ աշակերտներ զեղով կընդունուին :

Մարմաննութիւններու համար կարելի է դիմել Տիար Յ. Ս. Փափագեանին, (Առամնարոյժ) Վառնա, կամ Տնօրէնին հետեւեալ հասցէով՝ Է ն ս թ ի թ ի ւ Է ր մ է ն ի է ն 1024 (Սուխ)

«Կ Ռ Ո Ւ Ն Կ»

Հանգստ գեղարուեստական (Երաժշտութիւն, ճարտարագիտութիւն, ևւն)

(Կառմանայ)

«Կուռնկին» նպատակն է 1. Հայ արուեստը ճանչնել հայուն :

2. Եւրոպ. արուեստը ճանչնել հայուն :

3. Հայ արուեստը ճանչնել եւրոպային :

«Կուռնկին» տարեկան բաժնեգրին է Եւրոպայի համար 10 ֆրանք Ամերիկայի " 2 դալէր Ռուսիոյ " 4 ռուբլի Անգլիոյ " 8 շիլին Տաճկաստանի " 50 դահեկան

«Կուռնկին» օրինակ մը իբր նմուշ ձրի ստանալու համար պէտք է գրել հետեւեալ հասցէով՝

Գ. Բրօֆէսէօր Գալֆսեան Տիրէթթէօր-Ուտաքթէօր «Կուռնկին» 159, պուլվար Մօնթարնաս Բարիզ

« Ա Ր Մ Ի Ի »

Կ ի ս ա մ ս ե ա յ Ազգային, Գրական, Բաղադրական Տարեկան բաժնեգրին է մէկ տուար Ամերիկայի, 6 ֆրանք արասասահմանի համար :

Դիմել հետեւեալ հասցէին՝ Էտիգօր օֆ «Արմիւ» Բ. Օ. Պօքս 2191, Պօսթօն Մաս

Ա Ղ Ա Ս Ի

Ձէյթունի հերոսներ զիւցաներգութիւն, հինգ արարուած, եօթը պատկեր :

Դիմել հեղինակին՝ փոսթ ուսթանթ, Գաւիթէ, Եգիպտոս Գին ֆր. 1 50